

# ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անահիտ Մուրադյան (Հայաստան)

*Առանցքային բառեր՝ պատմիչ, բայափիմք, բարդություն, կաղապար, գոյական, ածական:*

Հայտնի է, որ լեզուն միատարր ամբողջություն չէ, այլ կազմված է առանձին տարրերից, միավորներից, որոնք խոսքի մեջ կարող են կրկնվել որոշակի օրինաչափությամբ: Լեզվական միավորների այդպիսի կրկնվածության ումնասիրությունը թույլ է տալիս հանգելու որոշակի եզրակացությունների նրանց գործածման հաճախականության մասին:

Հայ պատմագիր, պետական գործիչ Հեթում պատմիչի [4,331] «Պատմութիւն թաթարաց» աշխատության[3] լեզվական միավորների քննությունը կարող է բացահայտել հայերենի զարգացման միտումներն ու լեզվի քերականական կառուցվածքի տարժամանակյա յուրահատկությունները:

Հեթումն իր հեղինակային-անհատական կնիքն է դրել ժամանակի լեզվի վրա՝ իր նպաստը բերելով գրաբարի բառային կազմի համալրման գործում: Նրա աշխատության միջոցով հինհայերենյան բառապաշարի մեջ են թափանցել մի շարք բառային փոխառություններ, դարձվածային միավորներ, հեղինակային անհատական նորակազմություններ, որոնք ստեղծվել են բառաբարդման ու ածանցման կաղապարներով և ունեն պատմաքաղաքական բովանդակություն՝ շաղխված կրոնաեկեղեցիական, իմաստասիրական տարրերով:

«Պատմութիւնն թաթարաց» աշխատության լեզուն աչքի է ընկնում բառապաշարի հարստությամբ, ինքնատիպությամբ ու բազմազանությամբ, բառակազմական միջոցների (հիմքերի, ածանցների) գործածականության հաճախականությամբ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվական օրինաչափություններով:

Ներկա հոդվածի շրջանակներում ներկայացնում ենք Հեթումի երկում հանդիպող համադրական բարդությունների բառակազմական բոլոր կաղապարներն ու ենթակաղապարները, վերջիններիս կառուցվածքային առանձնահատկությունները՝ ցույց տալով դրանց բառաբարդման ընթացքը՝ ըստ բառաքերականական ձևայինների բառակազմական քայլերի, ըստ ածանցների գործածության հաճախականության և ըստ սերող հիմքերի:

Ամենից առաջ պետք է արձանագրել, որ երկում հանդիպող համադրական բարդությունների կաղապարների մի մասը վկայված է դեռևս նախորդ շրջանի գրական հուշարձաններում, բայց կան նաև բաղադրություններ, որ ստեղծում է Հեթումն ինքը:

Երկի բառապաշարի միավորների՝ մեր կատարած համեմատական քննու-

թյունից պարզվում է, որ զգալի թվով բաղադրյալ բառեր (շուրջ 62) չեն արձանագրվել ՆՀԲ [9] -ում. դրանք հեղինակային նորակազմություններ են [ 8, 101] :

Թեև երկի ամբողջ բառապաշարի մեջ բարդ և բարդաձանցավոր կազմությունները գերակշիռ թիվ չեն կազմում ածանցավորների համեմատությամբ, սակայն այս խմբի բառերի մեջ դրանց տոկոսային հարաբերությունը մի քանի անգամ ավելի մեծ է:

Քննությունը ցույց է տալիս, որ Հեթումն իր բառակերտումներում ածանցավոր կազմությունների համեմատությամբ ավելի շատ նախընտրում է բարդությունները:

Երկում գերակշռում են հոդակապավոր երկարմատ բարդությունները, որոնք երեք անգամ գերազանցում են անհոդակապ ձևերին. ընդ որում հանդիպում են հիմքերի ձևավորման բոլոր տարատեսակները.

1. «Մաքուր» անհնչյունափոխ հիմքերով բարդություններ SjS կաղապարով<sup>1</sup>, օր.՝ **դաշտավայր, դեղամահ, լաստափայտ, խեղդամահ, ծերակյոտ, մեծահամբաւ, միաբան, միախոհ, նետաձիգ, ոտնաչափ, վատասիրտ, քաղաքապետ, քաղցրաջուր** և այլն:

Այս կաղապարի ենթակադպարները հանդես են գալիս հետևյալ տեսակներով.

ա) Առաջին բաղադրիչի շեշտից կախված հնչյունափոխությամբ՝ SjS կաղապարով: Որպես առաջին հիմք ավելի շատ հանդես են գալիս **բազում** և **բարի** բառարմատները (վերջին ի հնչյունի ձուլումով հոդակապին՝ **ի + ա > ե**): Օր.՝ **բարեբեր, բարեխառն, բարեկամ, բարեյիշատակ, բազմամբոխ, բազմահարուստ, բազմաձեռն**: Մեկական օրինակ վկայված է **աղի, ատեան, երկիր, ինչք, նուրբ, մեջ, շուրջ, ուղիղ** արմատներով (հնչյունափոխական այլ դրսևորումներով): Օր.՝ **աղեջուր, ատենադպիր, երկրագործ, ընչասեր, նրբամիտ, միջավայր, շրջապատ, ուղղափառ**:

բ) Ավելի շատ են երկրորդ բաղադրիչի քերականական ձևավորում ունեցող հիմքերով բարդությունները՝ SjS՝ կաղապարով: Դրանք հիմնականում բայական հիմքեր են, որոնք համընկնում են

- անցյալ կատարյալի հիմքին, օր.՝

**կալ - ամենակալ, ինքնակալ կեաց - երկայնակեաց մուտ - հետամուտ տու - հարկատու**

- բուն հրամայականի եզակի թվին՝

**բեր - քաջաբեր թող- ձիաթող**

**տար - ընծայատար տուր - անձնատուր**

- պատճառականի հիմքին՝

**կառոյց- նաւակառոյց մատոյց - դժվարամատոյց**

---

<sup>1</sup> Բառերի բառակազմական կաղապարները ներկայացնելիս հետևել ենք Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմություն» աշխատության մեջ ընդունված պայմանական նշանների համակարգին [ 5, 54-56]:

մաքուր բայարմատին՝

**զէտ - խորագէտ խօս - հաւախօս**

**շէն - մեծաշէն, սագաշէն կուր - դեղակուր**

զ) Վկայված են մի շարք օրինակներ առաջին բաղադրիչի հնչյունափոխու-  
թյամբ և երկրորդ բաղադրիչի քերականական ձևավորմամբ՝ **ՏՅՏՖ** կաղապարով,  
օր.՝ **պտղալից, մտադիր, մառախլապատ, շրջակայ, գետնատար, դիմակալ,  
կուսակալ** և այլն:

դ) ՏՅՏ հիմնակաղապարի մեջ են մտնում այն կազմությունները, որոնցում  
առաջին կամ երկրորդ բաղադրիչը, կամ երկուսն էլ անանցավոր են: Անանցավոր  
(երկրորդային) սերող հիմքերով բարդությունները գրաբարում լայն կիրառություն  
ունեն. դրանք կարող են լինել թե՞ նախածանցավոր, թե՞ վերջածանցավոր: Երկի  
լեզվում արտացոլվել է դասական գրաբարի և ընդհանրապես հայերենի բառ-  
կազմության այն առանձնահատկությունը, ըստ որի նախածանցումը զգալիորեն  
զիջում է վերջածանցմանը, թե՛ բառերի ընդհանուր թվով, թե՛ կաղապարների  
բազմազանությամբ [5,358]: Պետք է նշել, որ շատ չեն հունաբան դպրոցի ստեղծած  
նախածանցներով կազմությունները, այսինքն՝ **Շեթումը** մեծ տուրք չի տվել հու-  
նաբանությանն իր պատմագրական երկում: Պատմիչը գործածել է 5-րդ դարում  
գոյություն ունեցող գրեթե բոլոր վերջածանցներով կազմություններ, որոնց մեջ  
կան և մեծ հաճախականություն ունեցողներ (-**ակ**, -**ային**, -**օրէն**, -**ուֆին**, -**ումն**) և  
ոչ գործուն կամ եզակի անանցներ (-**թար**, -**իւղ**, -**իստ**, -**ուչ**, -**օն** և այլն): Երկում  
հանդիպում են բազմաթիվ օրինակներ հետևյալ մասնակաղապարներով.

(Տa)Յ - **ժամանակակից, հեծելագոր**,

(Տa)ՅՖ - **իմաստաւեր, միայնակեաց, սակաւակեաց**,

(Տa)ՅՖ - **վայելչադիր**:

Տյ(Տa) - Երկրորդ բաղադրիչի վերջածանցավոր կազմությամբ ձևերն ավելի  
շատ են: Դրանցից գրեթե մեկ երրորդում որպես վերջածանց կիրառվում է -**ուֆին**  
գոյականակերտ անանցը: Օր.՝ **առատաձեռնօրէն, առատաձեռնութիւն, աստղա-  
բաշխութիւն, աւարահարութիւն, գետնատարած, դիմակացութիւն, երկրագոր-  
ծութիւն, խորագիտութիւն, ճնրադրութիւն, կռպալաշտութիւն, մարդասպա-  
նութիւն, նավա- հանգիստ, չարավատթար, սահմանակցութիւն, տօնախմբութիւն**  
և այլն<sup>2</sup>:

Անանցավոր հիմքերով զուգորդված կազմությունները նույնպես զգալի քա-  
նակ են կազմում.

(Տa)Յa - **հարստահարութիւն, ժամանակագրութիւն** և այլն:

ե) Հիմքերի կրկնությամբ (ՏՅՏ կաղապարով) հանդիպում են **բարձրաբերձ,  
մեծամեծ, չարաչար** բառերը. ընդ որում, առաջին օրինակում կրկնվող հիմքերը  
հնչյունակազմով տարբեր են:

---

<sup>2</sup> Շարադրանքը չճանրաբեռնելու նպատակով բերվող օրինակներում հիմքերի տարբեր  
ձևավորում ունեցող ենթկաղապարները չենք առանձնացնում:

զ) Երկու բաղադրիչների քերականական ձևավորումով (SfSf կաղապարով) վկայված է ընդամենը մեկ օրինակ. բայական հիմքերը համընկնում են կատարյալի հիմքին՝ **եկամուտ**:

է) Մակավաթիվ են նաև նախածանցավոր բաղադրիչով բարդությունները (aS)Sf կաղապարով: Երբեմն որպես նախածանց հանդես է գալիս յ նախդիրը, օր.՝ **յառաջախաղաց**:

ը) Կան կազմություններ, որոնցում հոդակապի դերով հանդես են գալիս **և, ու** շաղկապները կամ **ե** ձայնավորը՝ SjS կաղապարով: Օր.՝

**թվական՝ ScS - քսաննեւթն, ութուտասն,**

ScSf - **հնգետասան,**

**գոյական՝ ScS - այրուձի,**

Sc(Sa) - **ելևնուտք** (երկրորդ բաղադրիչը վերջածանցավոր):

2. Ամենից ավելի տարածված է SS հիմնակաղապարը հետևյալ տարատեսակներով.

ա) SS - «մաքուր» անհնչյունափոխ հիմքով, օր.՝ **այնժամ, այնչափ, այսչափ, այսօր, ծովեզր, մեծանուն, ջերմեռանդ, սանձարձակ** և այլն:

բ) SS - հնչյունափոխված առաջին բաղադրիչով, օր.՝ **լրտես, հրձիգ, ջրհեղեղ, ջրհոր, տնօրէն** և այլն:

գ) S'S - առաջին բաղադրիչի քերականական ձևավորումով, օր.՝ **եղբորորդի, հօրեղբայր, մահուչափ, քեռորդի** և այլն:

դ) SSf - երկրորդ բաղադրիչի քերականական ձևավորմանը՝ **ղիւրիմաց, ձեռնտու, ճեպընթաց, երկոտասան, հնգետասան:**

Վկայված են նաև մեկական օրինակ, երբ

ե) S'Sf - երկու բաղադրիչներն էլ ունեն քերականական ձևավորում՝ գործիական հոլովով՝ **այնուհետև**,

զ) երկու բաղադրիչներն էլ ածանցավոր են՝

(aS) (S'a) - **յառաջասացումն,**

(Sa) (Sa) - **վատթարագի ,**

է) SSa - երկրորդ բաղադրիչն է ածանցավոր՝ **երեքօրեայ,**

ը) SS բաղադրիչի կրկնությամբ գործածավել են հետևյալ բառերը՝

**բարբառ, կասկած, պէսպէս:**

Ինչպես հոդակապավոր, այնպես էլ անհոդակապ բարդությունների բաղադրիչներն ունեն նաև ածանցավոր հիմքեր:

Առաջին հերթին ուշադրություն են գրավում բազմաբաղադրիչ կաղապարները, որոնք երկուսն սակավաթիվ են: Ստորև ներկայացնում ենք Հեթումի աշխատության մեջ վկայված մի շարք օրինակներ հնգաբաղադրիչ և վեցաբաղադրիչ կազմություններով:

**{[a(SjS)]}a - անբարեխառնութիւն [(Sa)jS]a - հարստահարութիւն**

**{[(Sa)ajS - ներքինապետ [(SjS)a]a - սպառազինելի**

**[(S)jS]aa - դժվարաբնակելի [(Sa)jS]a - ժամանակագրութիւն**

Նկատելի է՝ մեծ թիվ չեն կազմում այն բառերը, որոնցում վերջածանցը կցվում է որևէ նախածանց ունեցող հիմքին: Այս դեպքում թե՛ նախածանցների և թե՛ վերջածանցների մեջ կան առավելագույն հաճախականություն ունեցող միավորներ (նախածանցների մեջ - **ան** ժխտական նախածանցը, վերջածանցների մեջ - **ութին** -ը), որոնք զուգորդվում են միմյանց՝ **անբարեխառնութիւն** :

Լեզվի ոճական առանձնահատկությունների տեսակետից առավել հետաքրքրական կազմություններ են երկարմատ, սակավ դեպքերում եռարմատ հիմքերով բարդությունները (վերջինները «գրաբարի բառակազմական համակարգում հազվաեպ են<sup>3</sup>»): Դրանցից շատերն արդեն իսկ իրենց բաղադրիչների կցմամբ պատկերավոր են և անկախ համատեքստից ոճական արժեք են ձեռք բերում, ինչպես՝ **նրբամիտ, ճարտարամիտ, արձակածառալ, մեծահամբալ, սանձարձակ, քաղցրաջուր, խարխալեցուցանեմ, հայրապետանիստ**: Նկատելի է, որ վերը նշված բառերը կա՛մ ձևավորվել են բառակապակցություններից, որոնցում որևէ բայ զեղչված է, կա՛մ միայն բայահիմքն է առկա:

Երկում գործածված համադրական բարդություններից շուրջ 60-ը գոյական է, 70-ը՝ ածական, 4 -ը՝ թվական, 10-ը՝ ձևի մակբայ, 1-ը՝ դերանուն:

Բարդ գոյականները պատկանում են **հիմք + հոդակապ + հիմք** և **հիմք + հիմք** հիմնականապարներին. գերակշռում են իսկական բարդությունները՝ «մաքուր» անհնչյունափոխ հիմքերով, ինչպես՝ **դեղամահ, հայրգիր, արքայակաղնի**:

Բարդ ածանցավոր գոյականների մեջ -**ութին** ածանցով կազմվել է 18 բառ, որոնք ձևավորվում են բառակազմական հետևյալ կաղապարը՝

բաղադրյալ հիմք + վերջածանց՝ **ականահատութիւն**[1,5]<sup>4</sup>, **սահմանակցութիւն, դիմակալութիւն** [ 7,8 ]<sup>5</sup> և այլն:

-**Ութին** ածանցը կապվում է հունարան հայերենին հատուկ՝ վերացականը թանձրացականի փոխարեն գործածելու ոճական հնարի հետ[11] :

Մյուս խոսքի մասերի համեմատ զգալի թիվ են կազմում ածականները: Բարդ ածականներն իսկական բարդություններ են՝ հոդակապով կամ անհոդակապ: Նկատելի է, որ ինչքան մեծանում է բաղադրիչների քանակը, այնքան ավելի քիչ են նրա կոնկրետ իրացումները[5,359] : Մեծ թիվ են կազմում բարդ վերջածանցավոր ածականները, որոնց բաղադրիչները կպակցվում են հետևյալ կաղապարներով .

ա) **վրանաբնակ**՝ պարզ հիմք + հոդակապ + պարզ հիմք + ածանց,

բ) **Ակնածելի**՝ պարզ հիմք + քերականական փոփոխված հիմք + ածանց + ածանց,

գ) **Դժուարաբնակելի**՝ պարզ հիմք + հոդակապ + հնչյունափոխված հիմք + ասծ. + ասծ. + ասծ.,

<sup>3</sup> 5-րդ դարի մատենագրության մեջ դրանց թիվը 4 տասնյակից չի անցնում [5, 136-137, 276]:

<sup>4</sup> 1. գ., ած (հնց.)՝ «ական փորող» նշանակությամբ, 2 փխբ. «գերեզման կողոպտող»:

<sup>5</sup> ած. «դիմացկուն, սոկուն»:

- դ) **Նավարկելի՝** պարզ հիմք + բաղադրյալ հիմք,
- ե) **Բարձրբերդցի՝** պարզ հիմք + պարզ հիմք + ած.,
- զ) **Վայելչադիր՝** բաղադրյալ հիմք + հոդակապ + քեր. փոփխ. հիմք,
- է) **Սպառազինելի՝** պարզ հիմք + հոդակապ + հնչյունապոխված հիմք + ած. + ած.:

Այսպիսով, բարդ ածանցավոր ածականները կազմվել են բնիկ և փոխառյալ արմատների հիման վրա ու ձևավորվել հիմնականում **-ակ, -ելի, -թար, -ուչ,**

**-ուստ** վերջածանցներով, որոնք գրեթե հավասար կենսունակությամբ են հանդես գալիս: Առկա է խառն ածանցում. մի դեպքում առաջին արամատական բաղադրիչն է ածանց ստանում (**վայելչադիր**), մի այլ դեպքում՝ երկրորդը (**մեծահարուստ**):

Բաղադրյալ մակբայները ևս զգալի թիվ են կազմում Հեթումի երկում: Դրանք ձևավորվել են հիմնականում **-բար, -օրէն** վերջածանցներով և արտահայտում են ձևի ու ժամանակի գաղափար: Այս բառերի կազմում հանդիպում են նաև նախդիրներ, օր.՝ **յօշյօշ:** Նշված մակբայները կազմվում են հետևյալ եղանակներով.

1. բաղադրյալ հիմք + ածանց՝ **ճարտարարուեստաբար**
2. պարզ հիմք + պարզ հիմք՝ այսօր :

Հեթումի երկում հանդիպող համադրական բառամիավորների բաղադրիչներն արտահայտում են շարահյուսական տարաբնույթ հարաբերություններ: Օր.՝

1. **որոշիչ - որոշյալ՝**
  - ա) ածական + գոյական՝ **քաղցրաջուր, արձակածավալ, մեծահամբավ,**
  - բ) ածական + ածական՝ **մեծահարուստ, չարավատթար,**

2. **հատկացուցիչ - հատկացյալ՝**
  - ա) գոյական + գոյական՝ **արքակաղնի, հայրգիր, հայրապետանիստ, աւարհարություն, ականահատություն,**

3. **խնդիր բայահիմք՝**
  - ա) գոյական + բայահիմք՝ **սանձարձակ, նուարկելի ,**

4. **պարագա - բայահիմք՝**
  - ա) ածական + բայահիմք՝ **վայելչադիր, դժվարաբնակելի, դյուրիմաց, նրբամիտ, ճարտարամիտ ,**

- բ) գոյական + բայահիմք՝ **սպառազինելի, վրանաբնակ ,**
- գ) գոյական + գոյական՝ **դիմակացութիւն, դիմակալութիւն:**

Հուսով ենք, որ հայ բառարանագրության համար արժեքավոր կարող են լինել «Պատմութիւն թաթարաց» երկում մեր հայտնաբարած ինքնուրույն անկախ գործածություն ունեցող համադրական բառամիավորները, որոնցից մի քանիսը, անկասկածաբար, պետք է նկատի ունենալ գրաբարի նոր բառարաններ կազմելիս: